

ՆԵՐՏՈՒՆԵՐԿՈՒՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՄՇԽԿ

Տարեկան գինը 10 լուրջի: Կես տարվանը 6 լուրջ:
Առանձին համարները 5 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“.
Կամ Tiflis, Rédaction „Mschak“.
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Սմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի և տօն օրերէն):

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով:

Ցայտարարութիւնները համար վճարում են
իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ:
Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ՀԱՄԱՐԱՅԻՆ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆԹԻՒՆ

Պատերազմական ծախքերի հոգսը Եւրոպայում. Ներքին Տեսչութիւն. Փոքր գրականութիւնը: Կանանց ծայրի իրաւունքը: Փաստեր և մտքեր: Նամակ Գանձակից: Նամակ Կաղզուանից: Նամակ Շամախուց: Ներքին լուրեր: ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ: Պատերազմի շուրջը: Հեռագրի միջոցով: ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ:

ՊԱՏԵՐԱԶՄԱՆ ԵՎ ՆԵՐՔԻՆ
ՆԵՐՔԻՆ

Այսօրվայ հեռագրերից մեր ընթերցողները կը տեղեկանան, որ Եւրոպայում պարլամենտը բացվեց նոր կազմութեամբ: Այդ պարլամենտի առաջ գրված են շատ ծանրակշիւ հարցեր: այն է՝ միջոցներ գտնել պատերազմական ահապահ ծախքերը հոգալու համար: Անհրաժեշտութիւն կը զգացվի աւելացնել պետական տուրքերը և սահմանել մաքսեր գանազան արդիւնքների վրա:

Եւրոպայում դեռ այնքան հարուստ երկիր չէ, որ կարողանայ հեշտութեամբ գտնել հարկեր միլիոնների գումարներ երկրաւոր պատերազմի միջոցով եւրոպական վարժութիւն ստացած զորքերի հետ: Իսկ ներկայ պատերազմը այն տեսակներից չէ, որ շուտով վերջանայ: Նա պէտք է երկար ամիսների ընթացքում պահանջէ ծախքեր թէ զորքերի պահպանութեան, թէ ռազմամթերքների պատրաստութեան և թէ նաւատորմի ու ծովային համար: Մի և նոյն ժամանակ ամբողջ երկիրը ստիպւած պէտք է լինի կաշկանդել իր ստիպողական արդիւնաբերական կեանքը և վաճառականութիւնը այն պատճառով, որ երկրի ոյժերը, փողադրական միջոցները և բոլոր մասնամասերը պէտք է ուղղված լինեն դէպի պատերազմական նպատակների իրագործումը:

Այժմ, երբ պարլամենտի առաջ դրված կը լինեն մի շարք ծրագրեր նոր հարկերի, տուրքերի և մաքսերի մասին, կը պարզվի ամբողջ երկրի համար, թէ որքան մեծ աղէտ է պատերազմը, թէ որքան պատառիտաւոր գործ է միջազգային յարաբերութիւնները սուր ընթացք ստանալու: Եւրոպայի արեւմտեան և կառավարչական շրջանները համար միայն մի բարոյական թեթեւութիւն կայ որոշ չափով, այդ այն է, որ պետական շրջանները, գտնէ արտաքուստ, համակիր չէին պատերազմի սկսելուն և նրանք մի տեսակ հասարակական կարծիքի ու ժողովրդական ցանկութեան ճնշման տակ ուղղակեցին իրանց զորքերը դէպի Կօթէս:

Անկասկած, այժմ, երբ պատերազմը սկսված է և Եւրոպայի պատերազմը հրապարակի վրա է դրված, ժողովրդական ներկայացուցիչները առանց երկար տառամանքների կը համաձայնեն մտցնել նոր հարկեր և մաքսեր, սակայն չը պէտք է մոռանալ, որ մաքսերի փոփոխութեամբ կարող են շօշափվել և ուրիշ պետութիւնները շահերը: Իսկ պետութիւնները ամենակէտ արամադրութիւն չեն ցոյց տալիս գոհելու իրանց շահերը եւրոպական ազգի նպատակների համար: Եւ այդ շահերի մասին բացառիկ հոգատարութիւնն է, որ բերել է այդ պետութիւններին դէպի Հեռուստ Արեւելի անհիւրընկալ փերը, այդ շահերի պաշտպան է, որ պահանջում է բաց գուններ բանալ Եւրոպայի և Ամերիկայի համար Արեւելեան շահերի ձայնն է, որ դրողում է քաղաքական գործողներին նպատաւոր դիրք գրաւել իրանց պետութիւնների համար այն ընդարձակ տարածութեան վրա, որ տեղ պէտք է տեսնական նաւաճումներ անէ Եւրոպական կապիտալը և արդիւնաբերութիւնը:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՓՈՐՐ ԳՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ

III

Այնպիսի ազգերի մէջ, ուր համեմատաբար շատ չէ զարգացած գրականութիւնը և առհասարակ գրական աշխատութիւնը մեծ գնահատութեան չէ արժանանում, երևան են գալիս այնպիսի հրատարակչներ, որոնց ձգտումը ոչ բոլորովին բարեգործութիւն է, ոչ էլ փող աշխատել: Այդ տեսակ հրատարակչներից մէկն էր ռուս միլիոնատէր Սոլոյատնիկովը, որ վախճանվեց երկու տարի առաջ:

Բազմաթիւ հրատարակութիւններ ունի այդ հարուստը, որ հազիւ էր գրականութիւն տուրքել, բայց անսահման վառ սէր ունէր դէպի գրականութիւնը և գիտութեան մարդիկը: Իր անհաջին հարստութեամբ նա կարելի էր դարձնում, որ արտասահմանեան գրականութեան ամենալուրջ, առաջնակարգ, մի և նոյն ժամանակ շատ ծանր պահանջները և շատ թանկ արժեքող գործերը թարգմանվեն ռուսերէն լեզուով: Աշխատողները ստանում էին օրինաւոր վարձատրութիւն, գրքերը հրատարակվում էին թանկ գինով: Այսպիսով չը կար բարեբաւութիւն այս բառի իսկական մտքով, բայց կար այն բարի գործը, որ ռուսաց գրականութիւնը հարստանում էր լուրջ, ստույգ արդիւնքներով, որոնք չէին գոյութիւն, եթէ միլիոնատէրի հոգը աշակցութիւնը չը լինէր:

Այսպէս էր և մի ուրիշ ռուս հրատարակչի Պալիկովը: Սա գործը գրել էր առեւտրական հիմքերի վրա, բայց մի և նոյն ժամանակ հրատարակչի մի անտարբեր, ամեն ինչի գլուխ տուող «սովորաբար» չէր, որ լաւ շահ ստանալու համար պատրաստ է հրապարակ նեւեր ամեն մի գրական գործ: Սեփական հաստատ համոզմունքի, որոշ ուղղութեան տէր մարդ էր, և նրա անապին հրատարակչական գործունէութեան վրա դրված էր յայտնի գիտական-առաջադիմական դրոշմ: Նա խրախուսում էր գրական գործիչներին, առաջ էր քաշում գրական ընդունակութիւնները, լայն չափերով ժողովրդականացնում էր առաջաւոր գրողներին և ինքն էլ, ի հարկէ, օգտվում էր նրա թաղանթի:

Այս տեսակ հրատարակչութիւն էլ չը կայ հայերի մէջ: Պակաս չեն մեզանում հարուստները, նոյն իսկ այնպիսի հարուստներ, որոնք կը թուրիւն են ստացել, լաւ ապրելու բոլոր յարմարութիւններն ունեն և եթէ մի բանի ծառա են, դա գրական փառքն էր, որ նրանք կը կամենային աշխատել իրանց ստանդարտային բարեկեցութեան վրա: Կան, շատ են այդպիսիները, բայց չը կայ մի բան, որ ամենագիտաւորն է—գաղափարականութիւնը...

Եւ այսպէս անա, հայոց գրականութիւնը զրկված է հրատարակչական համաբան բոլոր յարմարութիւններից: Մնում է միայն մի միջոց—բարեգործութիւնը, բայց դրանով ինչպէս յայտնի է, չէ կարող յարստե գոյութիւն ունենալ որ և է հասարակական գործ:

Պարզ է, որ այսպիսի ժողովրդի մէջ կարող է գոյութիւն ունենալ տեղական գրականութիւն: Եթէ չը կան մարդիկ, որոնք հաղաբներ կարող են մտցնել գործի մէջ, գրա փոխադրէն գտնվում են այնպիսի անհասանելի, որոնք մի կամ երկու հարիւր լուրջի են ձառում հրատարակչութիւններով պարապելու համար: Եւ հասկանալի է, թէ ինչ կարող են տալ գրանք: Այս հանգամանքը մի աւելորդ անգամ էլ ապացուցանում է, որ հայ գրականութեան հոգսերը ծանրացած են բացառապէս մեր միջակ, աշխատաւոր դասակարգի վրա: Դրա համար հայոց գրականութիւնը կենսական մեծ նշանակութիւն ունի, մինչդեռ բուրժուա-վաճառականական և բուրժուա-խոտելի-գէշտ դասակարգերի համար գոյութիւն չունի ոչ մի գրական շահ, ոչ մի հետաքրքրութիւն, եթէ չը հաշենք այն հազուադէպ միջոցները, երբ բուրժուա վաճառականը կամ խոտելի-գէշտը բարեհաճում են հետաքրքրվել, թէ ինչ հայերէն գրքեր կան այս կամ այն գրականատար:

նոցում և հեռանում են, համոզված իրանք իրանց համար, որ չը կայ գրքեր, չէ էլ կարող լինել...

Եւ այսպէս, երկուցը միանգամայն բնական է, օրինական: Ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, երբ մի կողմից նմանողութիւնն ու սահմանափակ ինքնուրոյնութիւնն է դեր կատարում, իսկ միւս կողմից նրա թաղանթի հարցը տիրաբար խեղդում է ամեն մի միտք, ամեն մի բարի ձգտում:

Այնուհետև մենք հետզհետէ կը տեսնենք, թէ ինչ է կարող տալ և ինչ է տալիս մեր փոքր գրականութիւնը:

ԿԱՆԱՆՑ ԶԱՅՆԻ ԻՐԱՆԻՆԻՔԸ

Երեկ հեռագրերը մի կարճ լուր բերեց Լօնդօնից:

«Համայնքների ժողովը կանանց ձայնի իրաւունք տալու ծրագրին ընդունեց»:

Ինչ և և կանանց իրաւունք չէ տուած քաղաքական և քաղաքային ընտրութիւններին մասնակցելու, բայց սկզբունքով ինչպէս արդէն ընդունված է: Գաղափարի թէ Անգլիան իր ազգային մեծ հիմնարկութեան, իր ստորին պարլամենտի բերանով յայտնում է ամբողջ աշխարհին, որ պէ՛տ է կանանց ընտր լինելու իրաւունք տալ, պէտք է քաղաքական իրաւունքների տեսակետից ձգտել հաւասարեցնել նրան տղամարդու, մարդկային ուժեղ, բայց տղեղ կէսի հետ:

Կանանց ազատագրութիւնը կամ էմանսիպացիան մի քայլ ևս առաջ գրեց:

Մինչև օրս լուսաւոր աշխարհը կանանց անընդունակ է համարել որ և է քաղաքական գործի համար: Կինը կուտարական աղբիւր է մէջ կողմ է մի իրաւագործի, մի ստոր կալի, որին փաղաքշում, շոյում, շողորթում են՝ աւելի հեշտութեամբ նրան տիրելու, նրան տուրքերի առարկայ դարձնելու:

Ո՞ւր յայտնի չէ գերմանական գլխիկի, ափական Փօրմուրը կանանց մասին: Kuche, Kinder, Kirche—խոնարհ, երեխաներ, եկեղեցի:

Բիւսմարկի հայրենիքը, այո, կանանց համար վերապահել է խոնարհ և երեխան... իսկ դրանց կողքին պատուների բթացնող կրօնամիտութիւնը:

Անա նրա բաժինը տեսնական փիլիսոփայցիկի աշխարհում: Աւստրիան, Շվեյց-Նորվեգիան, Դանիա, Հոլանդիան, Զվիցերլանդիան եւ նրա օրինակին բիչ կամ շատ չափերով: Իսկ լատինական Եւրոպան—կնոջը զարգացում է փաղաքանքով, նրան տիկնիկի, մանրեքէնի աստիճանի է հասցնում: Այնտեղ նա «մօզայի» համար է. նա պէտք է լաւ հագնվի, լաւ զարդարվի, լաւ օձիկ ու քալի: Կարճ՝ նա այնտեղ զուարճութեան առարկայ է: Այդ է պահանջում նրանից տղամարդը աշխարհը. այդ էլ նա կատարում է ամեն տեղ՝ ամենայն բարեխղճութեամբ:

Մնում են երկու երկիրներ, ուր կանանց սեն էլ մարդկային արարած է համարվում, ուր նա գտնէ օրէնքի առաջ հաւասար է եղել բիչ կամ շատ չափերով: Այդ երկիրներ են պաւօնական և Անգլո-սաքսոնցի ցեղերի աշխարհները:

Այն, ուսկ կինը շատ աւելի հաւասարութիւն է վայելում օրէնքի առաջ, քան գերմանական, Ֆրանսուէին կամ ազատ գլխիկներին:

Իսկ իրաւունքների և մասնաւոր հասարակական իրաւունքների տեսակետից ամենից կախարդական աշխարհները եղել են կանանց համար անգլո-սաքսոնցի ցեղերի պետութիւնները:

Դեռ 1890-ական թուերից աւստրալիական անգլիական գաղութներում կանանց տուել էին պարլամենտի ընտրութիւններին մասնակցելու լիակատար իրաւունքներ: Այդ գաղութները միակ վայրերն էին, ուր կինն ընտրութեան իրաւունքներ ունէր քաղաքական ապարհզում:

Միայնակ-Նահանգներից Կանզասի նահանգը ևս փորձեր արեց. այնտեղ էլ կանայք վայելում են ընտրողի իրաւունքներ, բայց ոչ

պարլամենտի ընդհանուր ընտրութիւններում, այլ միայն թաղական, ծխական, դպրոցական և այլ երկրորդական շարքերում:

Անգլիայում դեռ XVIII դարից կանայք մասնակցում են ծխական ժողովներին իբր ընտրողներ:

Անա արանք են եղել մինչև օրս կանանց համար դրախտային երկիրները, ի հարկէ լոկ ընտրութիւններին մասնակցելու տեսակետից:

Խնդիրը հասունացել է անգլո-սաքսոն երկիրներում: Այսօր հեռագրերը հայորդեց Անգլիայի օրէնքի մասին, վաղը նա կը հաղորդէ Ամերիկայից և անգլիական միւս գաղթականութիւնը: Եւ հեռու չէ այն օրը, երբ կանայք բոլոր լուսաւոր ազգերի մէջ ձայնի, ընտրութեան իրաւունք կը ստանան:

Դրանում ոչ մի կասկած չը կայ:

Կասկած չը կայ, որովհետեւ այժմ կանանց ձայնի իրաւունքի պաշտպան են հանդիսանում ոչ միայն առաջադէմ, արմատական սօցիալիստ կուսակցութիւնները, այլ և պահպանողականներն ու կղերականները: Վերջիններս պնդում են, որ կանանց քաղաքական ընտրութիւններին մասնակցելու իրաւունք տրվի, որովհետեւ, ասում են նրանք, կանայք միշտ կինորեն պահպանողականներն ու կղերականներն:

Բայց աւստրալիական գաղութները փորձ ցոյց է տալիս, որ պահպանողականների հաշիւները բաւական սխալ են: Միլիոններ և Միլիոններ ընտրութիւններում կանայք ձայն են տուել աւելի բանաւոր դասակարգի ներկայացուցիչներին, հարեցողութեան և անբարոյականութեան դէմ կողմնակից: Նրանք 1898-ին կատարել պաշտպան հանդիսացան ծեր աշխատաւորներին պետական գանձարանից ռոճիկ տալու խնդրին: 25 լինում ոչ մի ժողով հարեցողութեան դէմ, որի մէջ նրանք չը մասնակցեն և տաք ճառեր չը խօսեն:

Նրանց ընտրողական իրաւունքն անպայման բարոյական ազդեցութիւն կունենայ և լուսաւոր հին աշխարհի փշացած «ուժեղ» սեռի վրա:

Տղամարդկանց դասի կասկած օգուտը ևս պահանջում է, որ կինը հաւասար իրաւունքներ ստանայ կեանքի բոլոր ասպարէզներում:

Անա այդ տեսակետից մեզ ուրախութիւն է պատճառում Լօնդօնից եկած կարճ ու կարուկ հեռագրերը:

Սաճակ

ՓԱՍՏԵՐ ԵՒ ՄՏՔԵՐ

Թոքախտը բուժելի է, այո, այդ է ասում գիտութիւնը: Բայց այնուամենայնիւ նա տանում է բերաւոր գոհեր՝ ամեն կլիմայի տակ, ամեն հողի վրա: Պատերազմները իրանց անհամար զոհերով մարդկութեան համար այնքան սարսափելի չեն, որքան այդ անողորմ հիւանդութիւնը, որ, յանկարծ, մի գեղեցիկ օր բուն է գնում իր գոհի թոքերում ու նրան առաջնորդում է յամբարէն դէպի գերեզման: Զարմանալի չէ ուրեմն, որ գիտականները իրանց ամբողջ ուժով զինվում են մասնաւորապէս այդ մեծ պատուհանի դէմ:

Երբ գերմանացի Կօխը թոքախտի բժշկութեան գիւտն աւետեց, ամբողջ մարդկութեան մէջ ուրախութեան և յոյսի մի անօրինակ ազդակ բարձրացաւ: Դժբաղդաբար յոյսին չուտով յաջորդեց վատութիւնը: Գիտութիւնը սակայն չը յուսահատուցեց: Գիտականները իրանց աշխատանքները լուծեանք մէջ շարունակեցին կուել թոքախտի դէմ և մենք մի օր անհուշ յաղթանակով անկողնի տեսնենք թոքախտը, ինչպէս յաղթված տեսնեք այնքան ուրիշ հիւանդութիւններ, որոնք անբուժելի էին հոշակված:

Բայց մինչև այդ երջանիկ օրը ի՞նչ պէտք է անէ մարդկութիւնը: Պէտք է նստէ ձեռքերը ծալած: Ո՛չ—դրա՛ւ ապացոյց թոքախտի բուժարանները՝ սաւաօրիւմները, որոնք գոյութիւն ունեն գրեթէ բոլոր քաղաքակրթ երկրներում:

Թոքախտը բուժելի է, այո, բայց նրանց

համար, որոնք միջոցներ ունեն: Իսկ աղքատները, չբաշխվող, նրանք, որոնք ամենից առաջ են խնայողական լինելով այդ գարհուրելի արտի շարքերին, ամենից նույն պաշտպանված են: Ահա այստեղ է սկսում համայնքների, կազմակերպված մարմինների նույնական պարտականությունը: Թողա՞նք, աղքատի հիւանդությունն է գերազանցողը, նա մտնում է մուկ, խոնարհ, խեղճ խրճիթները:

Այս պատճառով էլ՝ քաղաքակրթ երկրներում, թողա՞նք դեմ կուլտուրալ լուսավորման միջոցն է համարվում գործառույթի, չբաշխվող արժանապատիվների տակ դնել առողջ բնականությանը, բարեկամ իրար կեանքի պայմանները:

Բայց դարձեց, գիտակցից մարդկությունը դեմում է մի առաջին արժանապատիվ միջոցի, որի մասին մի քանի խոսք դուրս է անգում չի լինի, մասնաւոր հիմա, երբ թիֆլիսում բացված հակաթորախտային ցուցահանդեսը հարցին տուել է այժմեությունը:

Փրանսիացի յայտնի գիտնական բժիշկներից մէկը՝ պրոֆեսոր Գրանշէ, Պարիզի «Բիւլլեն» Մեդիկալ» պարբերականում հրատարակած իր մի յօդուածով, սրանից մի քանի ամիս առաջ կոչումն էր անում բոլոր բարեացակամ անձերին նպատակ ունենալով թէ՛ բարոյագէտ մի վերին աստիճանի օգտակար գործի՝ այն է հեթիկաներին պաշտպանել թոքախտի դէմ:

Դոկտոր Գրանշէ գրում էր, թէ իր միտքը սաստիկ զբաղված էր Պատեֆորի հետեւող գաղափարով. «Մի ցեղ՝ մի ուրիշ է վարակիչ հիւանդությունն սպառնալիքից ազատելու լուսագոյն միջոցը՝ ցեղի սերմը հիւանդությունից դէմ պաշտպանելու մէջ է կայանում»: Պատեֆորի այս խօսքերը վերաբերում էին շերամների հիւանդության: Դոկտոր Գրանշէ եղբայրացիներն էր. «մարդկությունը թորախտի դէմ զինելու լուսագոյն միջոցը, երկխոսներին պաշտպանելու է»: Փրանսիացի բժիշկը մտածում էր, թէ հիւանդանոցներն ու անասնոթիւնները՝ թորախտի դէմ կուլտուր, թորախտառորներին հնարաւոր եղած չափով բժշկելու համար օգտակար միջոցներ են: Բայց դրանք անկարող են մարդկային բնակչության պաշտպանություն հասնել գործիքը դառնալ: Հիւանդութիւնը նպաստում էր լուսին փրկելու լուսին, բայց փրկելու փոխարէն դէմ հակազդուցական միջոցներ ձեւ առնելու անկախ կամ առաջին լուսին թորախտի դէմ կուլտուր հիւանդությունից անսպասելի քան թէ յետոյ:

Այդպիսով դոկտոր Գրանշէ «Երեխաներին թորախտի դէմ պաշտպանութեան գործը» հիմնելով և հասարակության աշխատելու խնդրելով, ձգտում էր հետեւող նպատակին՝ թորախտառոր ընտանիքների երեխաներին, վարակումի վտանգից ազատելու համար, հասնել ընտանեկան արտաւոր շրջանակից և փոխարէն նրանց առողջ ընտանիքներում, գիւղական շրջաններում: Այդ բանը ոչ միայն երեխաների, այլ և ծնողների համար պէտք է շատ օգտակար լինէր, որովհետեւ եթէ առաջիններին պիտի ապաստէր վերահաս հիւանդությունից, երկրորդների բնույթ թեթեւացնելով դիւրութեամբ կարիք առաւ հանգիստ և աւելի լուս պայմաններում ապրելու: Ու դոկտոր Գրանշէ կոչումն էր անում հարուստներին նախապէս օգնելու, բժիշկներին բարոյագէտ օժանդակելու:

Բժիշկներին վրա պարտ էր դրվում իրանց մոտեց գործած ընտանիքներում հետախույզ լինել այն երեխաներին, որոնց ծնողները թորախտառոր են: Խնամքով քննելուց և համադրվելուց յետոյ, թէ այդ երեխաները գեւ կամ չեն վարակված, մասնաւոր անկ նրանց «Երեխաների Պաշտպանութեան Դոկտոր» ղեկավարներին:

Ահա դոկտոր Գրանշէի մարդասիրական ձեռնարկը իր խոշոր գծերով:

Սպասելով որ մեղմանում էլ ձեռնառն անձեր հիմք դնեն այդ կարգի մարդասէր գործերի, մենք բժիշկներին նախաձեռնությունից կարող ենք սպասելի շատ քան: Նրանք գիւրդութեամբ պիտի համոզվեն թորախտառոր ծնողներին, որ մի առ ժամանակ հետո պահեն իրանց երեխաներին թունաւոր միջոցառումից, ուղարկելով նրանց ազգականներին կամ նոյն իսկ բարեկամներին մօտ: Այնտեղ, ուր պակասում է հասարակական ձեռնարկները, անհատական նախաձեռնությունները մի անհրաժեշտ պահանջ է դառնում:

Տիգրան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿՑ

Փետրվարի 29-ին

Մեր շնորհալի գերաստուհի տ. Սիրանուշիկը

այս տարի և այցելեց մեր քաղաքը ու մի-երկու շաբաթով կենդանութիւն տուեց մեր հասարակութեան, որը իր ընկած, ճնշված արտաճաղութեամբ այս տարի առանձնապէս աչքի է ընկնում: Տիկնոջ խմբում կային մեր դերասանուհիներից տ. տ. Փառանձեմ, Մէլիքեան ու Ազնիւ, իսկ գերաստուհիներից պ. պ. Յարութեան, Աւետեան, Աղայեան, Բերդեան, Նարեկեան և Աղեան:

Երկու շաբաթվա ընթացքում խումբը խաղաց հետեւող պիեսները՝ «Տօսկա», «Երկիրը երիտասարդութեան» («Ռուզան»), «Համէտ» (2 անգամ) և «Իգլի»։ Ներկայացումներից մոտերի կողմից ամենաառողջներն էին «Համէտը» (1-ի ներկայացումը) ու «Ռուզանը»։ Միւսները միջակ մուգը տուին: Տիկին Սիրանուշիկը իր առանձնաձգ գերերում միշտ լաւ էր, թէն «Համէտում», ի հարկէ, շատ հետո էր հայոց բեմի գերագին Ազատեանին հաւասարվելուց:

Միւս գերակատարներից աչքի էին ընկնում իրանց խաղով, երեքնուկի նոյն իսկ լաւ էին անպայման պ. պ. Յարութեան, Բերդեան ու Աւետեան. վերջինս հաստատ յոյսեր է տալիս մեր տաղանդաւոր բազմաշխատ կօմիկ Տէր-Գաթեանի յաջորդը լինելու մեր բեմի վրա: Գոյիկի է պ. Յարութեանի արագանութեան և այն, որ նա իր գերերը համեմատաբար լաւ է միանում, լաւ է սովորում. այդ միւս գերաստուհիների մասին հաստատապէս ասել չենք կարող. երեքնուկի գերերի լաւ չը սերտած լինելը չափազանց աչքի էր ընկնում ու ակամայ ծիծաղել ստիպում:

Պ. Աղայեանցը գովասանքի ու քաջալերման արժանի է իր 25 տարի հայ բեմին ծառայող համեստ մշակ, իսկ ոչ իր քան դրամատիկ պատասխանատու գերեր կատարող. ուժեղ, խիստ դրամատիկ գերերը նրան չեն աշխույժում, իսկ նա այստեղ այդպիսի առաջնակարգ գերեր էր կատարում: Այդպիսի գերերում պ. Աղայեանցը այդպէս ասած, «եղի» է տանում միմիայն, այլ ոչ թէ խաղում է:

Տիկին Մէլիքեանը Օֆելիայի գերում վատ չէր. հարկաւոր է նրան գեւ կա շատ աշխատել այդ գերին լուրջ արեւապետելու համար: Բաւարար էր տիկին Փառանձեմը իր գերում: Ներկայացրած պիեսների ընդհանրաբար անսամբը անպայման բաւարար լինելուց շատ հետո էր: Մենք համոզված ենք, որ նա միանգամայն բաւարար, նոյնիսկ շատ լաւ կը լինէր, եթէ տ. Սիրանուշիկ խմբում լինէին մեր բեմի առաջնակարգ ոյթերից մի երկուսը կամ Ինչու չը ճանապարհորդի պ. պ. Պետրոսեան ու Արէլ լիանի հետ միասին: Ինչու նրանք հետ ձեռք ձեռքի տուած չը գործել ու այդպիսով ամենաշուրջ բարձրացնել ըստ արժանւոյն հայ բեմը: Գրանշէի հասարակութիւնը իրաւունք ունի այդ պահանջել տ. Սիրանուշիկ, քանի որ թէ նախանցեալ, թէ անցեալ և թէ այս տարի այդ հասարակութիւնը վերաբերվեց նրան միտ համակրութեամբ, խրախուսեց, լաւ վարձատրեց թէ նախապէս և թէ ևս առաւել բարոյագէտ: Սիրանուշիկ Գրանշէի միշտ ցանկալի ու թանկագին հիւր է համարվում:

Անցեալ երկու տարիները տ. Սիրանուշիկ ներկայացումներն այստեղ աւելի աշուղ էին, թէ անսամբի և թէ հետեւաբար մոտերի կողմից: Այս տարի եթէ մոտերը համեմատաբար քիչ էր, պատճառն էր անսամբի թուլութիւնը, բեմական առաջնակարգ ոյթերի (բացի տ. Սիրանուշիկը) բացակայութիւնը. այս տարի չը կային նոյն իսկ պ. պ. Վարդուհի Արիստանեան, որոնք անցեալ տարի աչքի ընկնող աշուղութիւն ունեցան մեղմանում:

Պարտք ենք համարում մեր շնորհակալութեան յայտնել տ. Սիրանուշիկ ու նրա խմբի անդամներին, որ նրանք իրանց արժանաւոր գեկավարութեամբ հետ միասին համերգութեամբ կրում են հայ գերաստուհի ծանր լուծը, շրջում են գաւառական քաղաքները ու մայրենի լեզուն հնչեցնում բեմից: Մեր գերաստուհիները հնչեց միայն դրանով էլ մեծ օգուտ են տալիս մեր հասարակութեան, որի մէջ մարդու գրական ոճը ժողովրդականութիւն ստանալուց դեռ շատ հետո է, գործածական չէ համարել: Մարտի ոճը դեռ շատ պէտք է հնչէ նրա աշխույժին, աւելի յաճախակի պէտք է լաւ նա այդ ոճը, որ վերջապէս մի բան իւրացնէ, որ քիչ-շատ մարդու ու կանոնաւոր խօսել սովորէ: Լաւ խօսել չիմանալով, նա իր գերումն առնաւորութեամբ է թէ մայրենի և թէ օտար գործածական լեզուները: Ամենից շատ այդ նահատակութեանց բաժին է ընկնում, ի հարկէ, խեղճ ու կրակ մայրենի լեզուն, որի գլխին ամեն տեսակի «օյններ» խաղաղ ու խուժուկութեամբ կատարել ներքի ու շատ բնական է համարվում մեր հասարակութեան խաւերում...

Ստ. Տէր-Աւետիքեան

ՆԱՄԱԿ ԳԱՆՁԱԿՑ

Մարտի 1-ին

Փետրվարի 28-ին, երեկոյեան, Կաղզուանի հասարակութիւնը՝ ի պատիւ իր բարերար բժիշկ Վ. Նաստալիկին ընթերց էր պատրաստել նրա այստեղից Բաթում տեղափոխվելու առիթով պ. Պետրոսեանների տանը, ուր ներկայ էին նաև մեր յարգելի գաւառագետ՝ Հալիմ-Բեկով, սահմանապահ գործի հրամանատարը և քաղաքային պարոնի տեսուչ՝ Կիրակի:

Նախ քան ընթերցի նստելը, բժիշկին ներկայացվեց հասարակութեան նուէրը—200 ռուբլւ արժողութեամբ ակնաբուժական գործիքներ, երկու տուփերի մէջ գետնոված, որոնց վրա մակագրված էր «Բժ. Վաղդիմիր Պետրոսովիչ Նաստալիկին» Կաղզուանի հասարակութիւնից՝ յիշատակ նրա բարեգործութեան: Աւետիք չէ յիշել, որ յարգելի բժիշկը, երբ լսել էր, թէ հասարակութիւնը մի նուէր է տալու իրան, յայտնել էր, որ նա կը գերադասէր մի այնպիսի բան նուիրել, որ դարձեալ հասարակութեան օգտին ծառայեցնէ: Այդ պատճառով էլ մատուցվեցին յիշեալ ակնաբուժական գործիքները:

Նուէրը ներկայացնելիս բժ. Կաղզուանի մի ազգու ուղերձ կարգաց շատ զգացված, որին շնորհակալութիւն յայտնեց օրվայ հերոսը նոյնպէս զգացված: Եւ ապա նստեցին 30-ի չափ հրաւիրեալներն սեղանի շուրջը: Ընթերցի ժամանակ մէջընդմէջ խմում էին յարգելի բժիշկին կենացը, շնչոտելով նրա՝ ժողովրդին արած անգնահատելի ծառայութիւնները: Մի տեղացի երիտասարդ բնիկ կաղզուանցիներին կողմից շնորհակալութիւն յայտնելիս՝ ասաց.

«Մեծարող բժիշկ, դուք Կաղզուանում գործնականապէս ցոյց տուիք, որ բժշկական վստիկ կոչման արժանի մարդ էք—դուք ձեր գործունէութեամբ հետեւեցիք մեծ գաղափարականի, հոգու բժշկի մարգարէ օրինակին: Նա ասում էր. «Տուէր նրանց, որոնցից փոխարէնը ստանալու յոյս չունիք»: Իսկ դուք հնչեց այդպէս էլ արեցիք, ձեր ամբողջ ուժերը նուիրելով մասնաւորապէս՝ աղքատներին ու անհասկանալի և ընդհանրապէս՝ ամենքին, սակայն փոխարէնը ոչինչ չը ստացաք: Դուք ձեր բժշկութեան և ամենքի հնչեց առաջին կոչին վազելու շնորհիւ մեր ժողովրդին ազատեցիք «գողաքների», գորացների ու աղօթող պառնաւորների ձեռքի և նրան ընտնադրելով՝ հիւանդի համար՝ բժիշկ հրաւիրելով նրա մէջ, որ հիւանդի միակ խնամատար հայրն ու փրկողը բժիշկն է: Այժմ այն հասարակութիւնը, որի անդամներից շատերի արտասուածքը սրբել էք, շատերի վերադառնալու էք տուել, երախտապարտ սրտով իր խորին շնորհակալութեան զգացումները՝ իրեն փառքի պատկեր՝ սրբաւորում է ձեր ճանապարհի վրա, կոխտեցե՛ք այն և գնացե՛ք դէպի ձեր բարձր նպատակը...»

Ընթերցի վերջացաւ արշաւախի մօտ, երբ երիտասարդները յարգելի բժիշկին իրանց ուսերի վրա դրած՝ տարան տուն:

Հետեւալ օրը, երբ յարգելի բժիշկը բաժանվում էր Կաղզուանից, հասարակութիւնը մի չը տեսնված ցոյց արեց: Հազարաւոր երկսեռ բաժնիկները հազարապիսի օղակներով և նուրբ թաւերով խմեցին «ուրա»-ները. իսկ ինքը, մօտենալով բազմութեան, արտասուածք աչքերին՝ հաղիւ կարողացաւ արտասանել. «Կացե՛ք բարեւ, սիրելիք, ես չափազանց գոհ եմ հետաւում ձեզանից և երբեք չեմ մոռանալ այս օրը», ու ճանապարհ գնաւ: Հարկաւոր ձիաւորներ ու կառքով զննողներ ուղեկցեցին նրան մինչև Երասխի կամուրջը (վեց վերստ), որտեղ սեղան կար պատրաստված հասարակութեան կողմից: Այնտեղ ևս ճառեր ու ներբողներ արտասանվեցան: Մի գիւղացի շրջակայ գիւղերի կողմից ներկայանալով, օրվայ հերոսին յայտնեց գիւղացիների կողմից խորին շնորհակալութիւն, աւելացնելով, որ յարգելի բժիշկը «հալալ» անէ իր ձրի աշխատանքը՝ երախտապարտ գիւղացիներին: Նուազածուներն (սպանդար) խումբ, որ յատուկ եկել էր իր յարգանքը մատուցանելու, ասաց, որ թող մեծարգոյ բժիշկը իրանց խմբի յարգանքն էլ ընդունէ, «ինչ որ ունենք՝ այն ենք տալիս»: Մի այլ երիտասարդ, մօտենալով յարգելի բժիշկին, բռնեց ձեռքը՝ ասելով, «Պարոն բժիշկ, թող տուէք ինձ ժողովրդի կողմից հրապարակով

համբուրել այն ձեռքը, որը շատ և շատ բարեբեր է գործել ժողովրդի համար», և ձեռք կերպով համբուրեց:

Այդ անկեղծ ցոյցերից զգացված բժիշկը արտասուում էր, արտասուում էին և հանդիսականները: Նա իր վերջին շնորհակալութիւնը յայտնելիս հաղիւ կարողացաւ մի քանի բառ արտասանել ու հրաժեշտի ողջոյն տալ բոլորին, երբ երիտասարդները կրկին բժիշկին առան իրանց ուսերի վրա և տարան դրին կառքի մէջ «ուրաններով»:

Լուսանկար Ն. Արշաւիրդեան երկու անգամ պ. բժիշկին նկարեց իր շրջապատող բազմութեան հետ:

Աւետիք չեմ համարում մի դէպք արձանագրել բժիշկի կեանքից, որ և ընթերցողները գաղափար կը կազմեն նրա բնաւորութեան մասին:

Նա քաղաքի բժիշկ չէր, այլ գիւրդական և պաշտօնապէս պարտական չէր ժողովրդին օգնել, միայն նա իր խեղճ թիւադրութեամբ էր անում այդ ամենը: Մի անգամ գիշերով կանչվում է մի աղքատ ծննդականի օգնութեան: Փողոցներում ցեխ է լինում, երբ բժիշկին առաջնորդող անձը նկատում է նրա սայթաքելը, հարցնում է. «պ. բժիշկ, ինչ եղաւ»: «Ոչինչ, դու միայն շտապել գնա», պատասխանում է նա: Երբ նա հիւանդին կարեւոր դեղ ու դարման առնելուց յետոյ վերադառնում է մի և նոյն տեղը՝ ասում է առաջնորդողին. «Այժմ կարող ես ցեխի մէջ փնտրել իմ կրկնակօշիկը, որը այն ժամանակ սայթաքելիս փնայ ցեխի մէջ. այն ժամանակ հիւանդը մեղ էր սպասում»:

Մ. Ղազարեան

ՆԱՄԱԿ ՇԱՄԱՆՈՒՑ

Փետրվարի 20-ին

Անցեալ նամակով խոստացել էինք «Մշակ» ընթերցողներին մանրամասն տեղեկութիւններ տալ հանդիսեցեալ Ալեքսանդր Լալայեանցի պատմութեան մասին: Ահա մի քանի տեղեկութիւններ:

Հանգուցեալը իր երկու թուրը ու մի հայ ընկերների հետ մինչև գիշերվալ ժամը 12-ը թուրթ խաղալուց յետոյ՝ սկսում է լաւ ընթերցել, որից յետոյ ընկերները վերադառնում են իրանց տները, իսկ Լալայեանցը անցնում է իր ննջարանը քնելու. կանչում է ծառաներին, որպէս զի օգնեն իրան շորերը հանելու. ինքն նստում է բազկաթոռի վրա, իսկ ծառաները սկսում են մերկացնել նրան ու տեղն ու տեղը խնդրում են նրան:

Սոսկալի ոճիւր ծածկելու համար՝ մտածում են հրդեհել տունը, որպէս զի հանգուցեալի մահը վերագրվի հրդեհին: Այդ նպատակը իրաւագործելու համար հաւաքում են մի քանի աթոռներ պահարանի առջև, վերցնում են հանգուցեալի վերմակը և նաւթի մէջ թրջելով, հրդեհում, զոները պիտի փակում և հեռանում: Բայց շնորհիւ պիտի ծածկած լուսամուտների ու դռների՝ վերմակն ու աթոռները այրվելուց յետոյ հրդեհը դադարում է, երբ արդէն լուսանում է: Յուսահատված լեզուի ծառան, առանկով որ սոսկալի ոճիւր ծածկելու համար չը կալ՝ առաւօտեան վաղ դիմում է տեղեկան բանտի տեսչին և յայտնում, որ ինքն է իր աղային սպանել, նրան անմիջապէս բանտարկում են, բանտարկված են նաև միւս երկու ծառաները:

Մի քանի խօսք նրա անցեալի մասին: Հանգուցեալը Ալեքսանդր Լալայեանց անցել է իր երիտասարդական հասակը ամուրի և ամուրի էլ կնքեց իր մահկանացուն. նա անցել էր յիսուն և աւելի տարիներ՝ և այդ պատկանելի հասակի ու պատմական Լալայեանցների պատկան հարստութեան մէջ, որ ամբողջ Բագուի նահանգին յայտնի է, ոչ մի աչքի ընկնող գործ չէ արել հանգուցեալը: Վերջապէս այսօր մարմինը յանձնեցին հողին: Վիճակային առաջնորդ Անանիա կալիկոպոսը համառօտ և աղիւս բարոյ խօսեց մարդկանց փառաւոր ապրուստի և առանց յիշատակ թողնելով մեռնելու մասին:

Ջաբար

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեկ հաղորդում են, որ Հայոց Վեհափառ Կաթողիկոսը անցեալ շաբաթ Սանահին վերադարձաւ Էջմիածին, չը մտնելով Սանահին վանքը՝ եղանակների վատութեան պատճառով: Նորին Վեհափառութիւնը մի քանի օր միայն հիւր է ֆնայել Լալուարի հանքերում՝ Արդու թեմաների մօտ: Մեկ հաղորդում են, որ Նոբին Օծութեան առողջութիւնը բաւական լաւ է:

Մեզ դիմել են մի քանի տեղից հարցով, թե ինչն է հետադարձ կապը և կապակցությունը արդիւնաւորութեան մասին ընկերակցութիւնները գաւառներում, յարմարեցրած տեղական պահանջներին: Մեր խորհուրդը հետեւեալն է: Երկրագործութեան և ֆինանսներէ միմիտութիւնները մշակել են նորմալ կանոնադրութիւններ ընկերակցութիւններին համար և շատ հեշտութեամբ թոյլատրում են այդպիսի կանոնադրութեամբ ընկերակցութիւններ բանալը: Ուստի նպատակայարմար կը լինի սկսել գործը նորմալ կանոնադրութեամբ, իսկ ապագայում, երբ կեանքի փորձը կը թելադրէ նոր փոփոխութիւններ մտցնել կանոնադրութիւններին մէջ, աւելի հեշտ կը լինի աշուղեցիները նրանց ընդունելութիւնը և հաստատութիւնը:

Հակաթոքախտային ցուցահանդէսի վարչութիւնը պատրաստակաւութեամբ ընդունում է գաղտնիքներ արշակներին և տալիս նրանց դատարանական բացատրութիւններ: Ցանկալի է, որ դպրոցները ղեկավարներն օգտվեն այդ պատրաստակաւութիւնից և արշակներին ուղարկեն այդ կարեւոր ցուցահանդէսի հետ մանրամասն ծանօթանալու համար:

Մեզ հաղորդում են, որ Թիֆլիսում բացված մրցարժեքական ընկերութիւնը ներկայումս տեղեկութիւններ է ժողովում կողմնակա մըրքերի և պտուղների գնանքան տեղեկութիւններին, թէ նրանց բարեբաղուն և թէ լաւագոյնները տարածելու նպատակով:

Մեզ հաղորդում են, որ Մեծ-Ղարաբախում պատրաստութիւններ են տեսնում հիմնելու հակա-ալիօսողական ընկերութիւն, նման Ռուսաստանի միւս քաղաքներում գոյութիւն ունեցող ընկերութիւններին:

«С.Пет. Вѣд.» լրագիրը հաղորդում է, որ Բիզպիլի գործարարների միջ մասը ածուխ հայթհայթողներից յայտարարութիւն ստացաւ, որ գործարարատեղերը շտապէն զննելու իրանց համար անհրաժեշտ ածուխի պաշարը, որովհետեւ կարող է պատահել, որ շուտով Ռուսաստանում այլ ևս ածուխ չը ծախվի:

Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերութեան անցած տարվայ զուտ արդիւնքը հասնում է 198,144 ռ. 36 կոպէկի: Դիվիդենդ բաժանվում է 9 ռ. 92 կոպէկ, իսկ 100 ռ. վրա 1 ռ. 88 կ. պահվում է իբրեւ պահանտի գրանցվում:

Մայրաքաղաքի լրագիրները ասելով ներկայ 1904 թվականի պետական բիւջէում 140 միլիոն խնայողութեան կը լինի: «Русск. Вѣд.» ասում է, որ այդ թիւն են ընդունում ամենաբանիմաց և զգուշաւոր մարդիկ, որոնք չեն սկսել վարկեանի ազդեցութեան տակ:

Պետերբուրգից հաղորդում են «Русск. Вѣд.» լրագիրը, որ մամուլի գործերի գլխաւոր վարչութեան կարգադրութեամբ, Հէլսինգֆորսում հրատարակվող «Päivälehti» ֆինլանդական լրագիրը մի ամիս դադարեցնում է Ենթարկվել, որովհետեւ փետրվարի 11-ի համարումն է տեղադրել յունվարի 27-ի Բարձրագոյն մանիֆէստը և փետրվարի 14-ի համարումն նոյն մանիֆէստը ապել է կանոնական կերպով կրճատելով Բարձրագոյն տիտղոսը:

ԿԱՆՁՈՒՄՆԵՐԸ մեզ գրում են. «Ինչպէս լուում ենք» տեղիս քաղաքային դպրոցի տեսչը ցանկանում է այգեգործական բաժին բաց անել մի և նոյն դպրոցում և զբաղակալ նա պէտք է հասարակական ժողով կազմել ներանց համաձայնութիւնը ևս ստանալու: Կազմուանի հասարակութեան համար մի անհրաժեշտ պահանջ լինելով այգեգործութիւնը՝ յոյս կայ, որ հասարակութիւնը սիրով կաջակցէ այդ գործին»:

Մէմֆիս մեզ գրում են. «Փետրվարի 29-ին տեղիս ժողովարանի զանիճում հայ սիրողները, յօգուտ Կարմիր խաչի և նաւաստորմի ուժեղացնելու, խաղաղին «Գիշերվայ սարը խէր է», «Միկիլի հարսանիքը» և «Բանաստեղծ» վոքալիները: Բոլոր դերակատարները աշուղութեամբ կատարեցին իրանց դերերը: Ներկայացման վերջը ասիական պարեր ևս եղան: Չուտ արդիւնքը կը լինի մօտ 120 բուրլի, ներկայացմանը բաւական հասարակութիւն էր հաւաքվել: Միւրովիսը պատրաստվում են Զատիկին և մի ներկայացում տալ: Այստեղ

արդէն գարունը բացվել է. ծառերը ծաղկել են. թիւրքմենները վար ու ցանքը սկսել են»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԻՐԱՅԻՆ ՇՈՒՐՁԸ

Պատերազմը կարող է շուտ վերջանալ: «N. W. A.» լրագրին հեռագրում են Պետերբուրգից, թէ լաւ գիտակ շրջաններում այն համոզմունքն է տիրում, թէ ներկայ պատերազմը ոչ միայն նոր բարդութիւններ առաջ չի բերի, այլ և ինքը շուտով կը դադարի: Եւ այդ կը լինի ոչ թէ այն պատճառով, որ այս կամ այն պատերազմող կողմը որ և է մի վճռական յաղթութիւն կը տանէ—այդպիսի յաղթութեան դեռ շատ երկար պէտք է սպասել—այլ միայն ուսաց պաշտօնական շրջանների խաղաղասիրութեան շնորհիւ: Երբ Անգլիան և Ամերիկան արդէն ցոյց տուին, թէ նրանք անկեղծօրէն մտադիր են չէզոքութիւն պահպանել ամենայն խստութեամբ, այստեղ յոյս ունեն—ասում է թղթակիցը—որ պատերազմող պետութիւնները կը յանձնեն իրանց վէճը Հաագայի իրաւաբարական առեւտրի ընտելութեան, որը և կը լուծէ այդ վէճը: Իբրեւ ապացոյց դրա, Պետերբուրգում մասնաւոր են անում այն իրողութիւնը, որ ռուսաց արտաքին գործերի մինիստրութիւնը ներկայումս հաւաքում է մեղադրական նիւթ Եւրոպայի դէմ, որը և կը ներկայացնէ Հաագայի դատարանին: Մասնացոյց են լինում և Բարձրագոյն մանիֆէստի ընազրի վրա, որով պատերազմ յայտարարվեց Եւրոպային: Նախկին բոլոր այդ տեսակի յայտարարութիւնների մէջ խօսվում էր «Թշնամու երկրի սահմանները մտնելու մասին», իսկ ներկայ մանիֆէստում այդ խօսքերի տեղ ասված է «Թշնամու վանման մասին»: Դրանից Պետերբուրգում գալիս են այն եղբակցութեան, թէ հնարաւոր է յանձնել Եւրոպայի հետ ունեցած վէճը միջազգային դատարանին: Ընդունի ռուսաց ղեսպան կամ Բենկեն-գորֆի Պետերբուրգը գալը և վերադառնալը նոյնպէս առիթ է տուել յոյսեր տածելու, թէ խնդիրը կարող է յանձնվել Հաագայի միջնորդ դատարանին: Այդ ուղեորութեանը արտասահմանում քաղաքական առանձին նշանակութիւն են տալիս: Պատմում են, ասում է «Новое Время» լրագիրը, որ Ընդունի մեր ղեսպանը կեկ է այստեղ, բերելով նոյն իսկ Անգլիայի կողմից առաջարկութիւն՝ միջնորդ հանդիսանալ մեր և Եւրոպայի միջև: Սակայն Բերլինի «Post» լրագիրը հեղինակաւոր տեղից հետեւալ բացատրութիւն է ստացել այդ մասին: Կոմս Բենկենգորֆը յանձն չէ առել չէզոք պետութիւնների կողմից ոչ մի միջնորդութիւն կամ Հաագայի միջնորդ դատարանի ոչ մի միջնորդութիւն: Ռուսաստանում ոչ ոք ոչ մի քայլ թող չէ տալիս իրան մտածելու խաղաղութեան բանակցութիւնների մասին մինչև այն ժամանակ, երբ Ռուսաստանի շօշափված պատերը և արժանապատւութիւնը բոլորովին գոհացումն չեն ստանալ: Պատերազմի ներկայ շրջանում խօսք կարող է լինել միայն կուրի և Եւրոպայիցներին Կորէայից իրանց կղզիները բռնելու մասին: Այդ, ի հարկէ, չէ նշանակում, թէ երբ համապատասխան քայլեր կը հանին, Ռուսաստանը չի համաձայնվի չէզոք պետութիւններին խաղաղ միջնորդութեան, բայց, յամենայն դէպ, այդ քայլեր դեռ չէ հասել և միջնորդութեան համար ժամանակը չէ հասունացել: («Н. В.»)

Թիֆլիսի համար պէտք է անցնող-հրանախան ցամաքային խելը: Անգլիական լրագիրների մի մասը, գրում է «Рус. Инв.» թիւթը, սկսել է ընկել այն հարցը, թէ շատ կարելի է, որ միւս պետութիւնները մտնեն Հեռավոր-Արեւելքի կուրի մէջ և մանաւանդ սկսել է շատ յուզվել Ֆրանսիայի միջնորդութեան հետեւանքներով: Եւրոպայի ծովային աշուղութիւնները, ասում է «Daily Chronicle», ազատ են կացուցանում մեզ մեր զանազանի կատարելապետութիւնից սպասելու պարտաւորութիւնից, բայց Ֆրանսիան, կարծէք, ներկայումս կանգնած է այդպիսի պարտաւորութեան առաջ: Միջպէս վճռական կերպով հաստատելով, թէ Ֆրանսիան պարտաւոր է փրկել կատարելապետութիւնից զաշնակից Ռուսաստանը, յիշեալ լրագիրը այնու ամենայնիւ երկիւղ է կրում նրանից, որ գուցէ նոյն նպատակով, այսինքն Ռուսաստանին կատարեալ պարտութիւնից փրկելու նպատակով միանայ Ֆրանսիային և Գերմանիային, որպէս զի զրկէ Եւրոպային իր յաղթութիւնների պտուղները: Այդ ժամանակ, ասում է լրագիրը, Անգլիան

ստիպված կը լինի պաշտպանել Եւրոպայի եւրոպական համախմբման դէմ և որովհետեւ այդպիսի դրութիւնը վտանգաւոր և վարձուրդեղ կը լինէր, ուստի միակ միջոցը խուսափել նրանից, կը լինի Ֆրանսիայի հետ երկար, հաստատ դաշնակցութիւն կապելու անհրաժեշտութիւնը, այնպիսի մի շահաւէտ դաշնակցութիւն, որ այդ շահերը ստիպէին նրան, անտարբերութեամբ վերաբերվել Ռուսաստանի հետ ունեցած դաշնակցութեան: Բացատրելով այդպիսի մի կոմբինացիա, լրագիրը ստիպված է սակայն խոստովանել, որ այժմ շատ դժուար է ցոյց տալ այդպիսի քաղաքականութեան շահերը, բայց Եւրոպան օգտված կը լինէր միայն երկու ամենամեծ արեւմտեան պետութիւնների այդպիսի դաշնակցութիւնից: (Рус. Инв. Рус. Вѣд.)

ՄՇԱԿԻ ՀԵՌԱԳԻՐՆԵՐԸ

ՌՈՒՍՍԵՑ ԳՈՐԾԱԿԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ

5 մարտի

Կ. ՊՈԼԻՍ. (Կորբուս. Բիւրօ) Բիթլիսի վիլայէթում դրութիւնը երկիւղ է ներշնչում: Սպասվում է քիւրդերի կողմից յարձակում հայերի վրա:

ՏՈՒՐԻՆ: Աօտի հերցոգը կտրեց ձախ ոտը: Ոչ մի բարդութիւն չէ երևում:

ԼԻԻՏՏԻՆ: Հսկող ոստիկանութեան տունը ենթարկվեց անխիտանականների յարձակմանը: Նետակցին ուժերը: Վիրաւորված են 7 հոգի, որոնցից 4-ը ծանր:

ԳԻՐԲԱՆԱՐ: Այբերտ Թագաւորը՝ նստել, որի վրա գտնվում է գերմանական կայսրը, մտաւ նաւահանգիստը: Տեղի նաւահանգիստը գնաց նստել կայսրին ողջունելու համար:

ՕԴԵՍՍԱ: «Արեւիկ» և «Կորէկ» 32 վիրաւոր նաւատիրները՝ բժշկի ուղեկցութեամբ «Կորմեն» նստով Պորտ-Սալդից դուրս եկան և Օդեսա կարող են հասնել մարտի 9-ին, երեքշաբթի: Քաղաքային վարչութիւնը քաղաքային խորհրդին առաջարկել է հանդէսով դիմաւորել այն ծովագնացներին, որոնք սպասվում են մարտի երկրորդ կէսերին:

ՄՕՍԿՎԱ: Բօրայի կոմիտէտում միտք է յղացել Լազարեան ձեռնարանին միջոցներ տալ չինական, եւրոպական և կորէական լեզուներ մշակական դասընթաց ունենալու համար:

ՏՈՒՐԻՆ: Ռուսական ձիաւոր դուռը Ի-Չժուի է Իծնչին միջև յանկարծ առաջ շարժվեց: 200 ձիաւորներ հասան մինչև Զէլչենկօ գետը: և սկսեցին հրացան արձակել միւս ափի վրա գտնվող եւրոպացիների վրա: Եւրոպացիները հակառակորդի կրակին չէին պատասխանում:

ՇԱՆԳՀԱՅԻ: (Բէյա. գործ.) Ցինամպօի մօտ գտնվում էին 10 եւրոպական պատերազմական նաւեր: 12 փոխադրող նաւեր այնտեղ ափ իջեցրին զօրք: սպասվում են կրկին 30 փոխադրող նաւեր՝ 20,000 զօրքով:

ՉԻՖՈՒ: (Բէյա. գործ.) Պորտ-Արտուրը են գալիս միշտ կենսական միջոցներով լիքը գնացքներ: Երկաթուղին անվտանգ է: Ռուսական ֆլաուված նաւերի կարիւրումը ազդ է ընթանում: Անցեալ շաբթի վերջին Զէմուլայօ ափ իջան 3,000 եւրոպացիներ: Սպասվում է էլի 2,000 մարդ: Զանապարհի վրա եղած քաղաքները եւրոպացիները գրաւում են մանր գործարարներով:

ԱԼԵԿՍԱՆԴՐՈՎՍԿԻՑ ՊԱՆԱ: (Սախալին): Սախալինի վրա ամեն ինչ հանգիստ է: Բոլորն անհամբերութեամբ սպասում են դէպքերի ելքին:

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ: Փոխադրելի հեռագիրը Նոյն Մեծութեան Մուկելից, մարտի 5-ից: «Գեներալ Միլլենկօ» զինուորացու է, որը Պէնսիլանից ստացած տեղեկութիւնների համեմատ, այնտեղ է գտնվում հետեւի զօրքը մի քանի թիւղանոթներով: Կորէական սայրերով են տարվում միջոցները պաշարները: Թշնամու հեծելազօրքը մեծ խմբերով չէ նկատվում: Երևում են միայն հասն հոտ ձիաւորներ: Չիւրի կազմը վտանգ է թույլ: Մեր հեռախոսները Զիօն-Զիօն-Գան դեմո-ափին, Ան-Զիօնից հինգ վերստ հեռաւորութեամբ, տեսան թշնամու հետեւի զօրքը, որը կրակով հանդիպեց նրանց, որի ժամանակ մեզ մօտ սպանվեց մի ձի:

ՄՕՍԿՎԱ: Քաղաքային վարչութիւնը պատրաստում է Ամուրի, Սուչաւարի և այլ գետերի վրա լողացող հիւանդանոցների պատկանելիքները:

ԲԵՐԼԻՆ: Այստեղի քաղաքական շրջանները և ազգայնականները արմատաւորութեան մէջ ոչինչ փոփոխութիւն տեղի չէ ունեցել երկու պատերազմող կողմերի կերպերմամբ: Մա-

մուլը խիստ չէզոքութիւն է պահպանում և առաջին պէս իրան կօրէկտ է պահում: Մի և նոյն ժամանակ ակներե կերպով Ռուսաստանին բարեացակամ կարծիքներ է յայտնում, և գնալով աւելի սակաւ նկատելի է դառնում զերմանական մի քանի լրագիրների կողմից գէպի Եւրոպայի արտայայտվող բարեկամական ուղեւորութիւնը: Եւրոպացիների պատերազմ վարելու եղանակը վերջերս յաճախակի քննադատութեան էր ենթարկվում: մասնացոյց են անում զօրքերի դանդաղ ափ իջնելու վրա Կորէայում և պախարակում են եւրոպական զօրապետներին, որոնք ոչ միշտ կանգնած են լինում ժամանակակից արեւմտի բարձրութեան վրա:

ՇԱՆԳՀԱՅԻ: Չիֆու հասաւ ամէրիկական «Ցինցինատի» կրէյսէրը, որը տեղեկութիւն է է բերել 300 ուսանողի և 200 եւրոպացիների միջև տեղի ունեցած ընդհարման մասին ոչ հեռու Պէնսիլանից: Եւրոպացիները կատարելապէս ոչնչացան—Բոլոր մասնագէտների միտքայն եւրոպացիութեան համեմատ, եւրոպացիները մտածում են շուտով ետանդուն կուր մղել ցամաքի վրա: նրանք այդ բանին պատրաստվում են նոյն գաղտնապահութեամբ, որպէս նրանք վարվում էին Պորտ-Արտուրի յարձակման վերաբերմամբ:

ՏՈՒՐԻՆ: («Բէյա. գործ.»): Մարտի 5-ին գումարված պարլամենտը կը բանայ կայսրը հանդիսաւոր կերպով մարտի 7-ին կամ 8-ին: Մահաւորաբանների և առաջարկմանների կուսակցութիւնները կը պաշտպանեն կառավարութիւնը: շնորհիւ դրան ապահովված է կառավարութեան առաջարկած ֆինանսական պրօգրամի ընդունումը:

ՆԷԱՊՈԼ: Եօհանսա ուղեւորվեց «Օրլէնսբուրգ» շոգենաւ իտալական Կարմիր խաչի եւրոպական նաւակայանի ուղարկած առարկաներով: Վաղը Օդէսա կերթայ «Սօրվիտ» շոգենաւը իտալական Կարմիր խաչի ծանոթացր ռուսականին տանելու համար:

6 մարտի

ԼԵՆԻՆ: Չիւրիգովի նաւահանգիստը աղանաւանութեան պարագլուխը գնեւալ Լիւնիլիին հեռագրեց հետեւալը: «Չիւրիգովիան աղանաւանութեան զաւակ, դուք արդէն շատ անգամ ցոյց էք տուել Ռուսաստանի թշնամիներին ձեր ուղղական կարիճութիւնը: Մեր աղանաւանութիւնը հպարտանում է, որ ինչ տանիքի անդամներից մէկը դրված է ռուսական առաջնակարգ զօրքի դուռը հեռաւոր ծայրում: Գիտեալով ձեր պատերազմական փառաւոր անցեալը, չիւրիգովիան աղանաւանութեան արտակարգ ժողովը, համոզված, որ դուք կը պահէք նոր փոփոխներով ձեզ և ձեր առաջնորդութեան տակ եղած զօրքը, առաքում է ձեզ ջերմ բարեմաղթութիւններ, առաջնորդութիւն, աշուղութիւն և երջանիկութիւն խնդրելով ձեզ համար:

ՄԵՌԻՆ: (Բէյա. գործ.) Մարքիւ Բոնո, ցեղեկ ընդունվեց կորէական կայսրի մօտ հանդիսաւոր ուղեւորութեան: Ընդունելութիւնը կայացաւ հանդիսաւոր դահլիճում: Կայսրը շատ սիրալիւ էր: Ինչպէս հաղորդում է գաղանի խորհրդի անգամ Ցուցուկին, որը Բոնո շքանքի մէջ էր, այդ պետական գործչի ուղեւորութիւնը ձեռնարկված է միմիայն Մի-կազօի անձնակազմի պահանջով, որ ուղեւոր էր ներկայ աղմկոյն ժամանակում առաջադրելի իր համակրութիւնը կորէական պետութեանը: Մարքիւ Բոնո ուղեւորութիւնը ոչ մի քաղաքական նպատակ չէ հետեւում:

ԼՕՆԴՕՆ: (Բէյա. գործ.) Եւրոպական նախկին մինիստր Սուգմատտու, մարկիզ Իոթի փեսան, ժամանեց այստեղ երէկ և խորհրդակցում էր Լանդգուշի հետ արտաքին գործերի մինիստրութեան մէջ:

ՏՈՒՐԻՆ: («Բէյա. գործ.»): Ռուսական բոլոր զօրքերը, բացի 200 կազակներից, հեռացան Եւրոպի այն կողմը: Կազակների զինապահները շրջում են Եւրոպի և Պէնսիլանի միջև 40,000 ուսանող կենտրոնացած են Կիւլչէն-նում: այդ կէտի և Անգլիի միջև ձգվում է պահակախմբերի մի շղթայ, որ գնաւորված են 400 եւրոպացիներով: Իւրաքանչիւր պահակախումբ բաղկացած է հինգ կազակներից: Ռուսները Եւր-Չժուանում ունեն մի քանի գաղտնային բաւարեաններ, Կրուպիկ 9 թշնամիներ և մի քանի մօրտիւններ: 2000 մարգիկ ռուսական հետեւի զօրքից 4 բաւարեաններով գտնվում են Ֆին-Նուան-Չէնում: Նրանք ապահովված են ուսանող պաշարների բաւարար բանակութեամբ և կարող են երկար պահպանվել զբաւած դիրքի վրա: Եւրոպացի

